

Ա.Խ.Մայրապետյան, Ա.Դ.Թադևոսյան, Զ.Ս.Ալեքսանյան, Ա.Դ.Թովմասյան,  
Բ.Շ.Ստեփանյան, Դ.Ս.Գալստյան

ԱՅՍՎԱՆ ԽԹԱՄԻՉ ԿԼ-Ի ԱՁՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՏՐՈՆԱՅԻՆ ՈԵՐԱԾԻ  
ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱԸ ՎՐԱ ԲԱՑՈԹՅԱ ԳԻՂՐՈՊՈԽԿԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ուսումնասիրվել է աճման խթանիչ  $KL^1$ -ի ազդեցությունը կիտրոնային ռեհանի (*Ocimum basilicum* Hochst. var. *citriol*) արդյունավետության, ֆիզիոլոգակենսաքիմիական և դեղաքիմիական ցուցանիշների վրա:

Փորձերը դրվել են 3 տարրերակով՝ 1. ստուգիչ (Դավթյանի սննդալուծույթ); 2. սերմերի նախացանքային մշակում  $KL$ -ի 0,01%-ոց լուծույթով՝ 24 ժամ տևողությամբ; 3. սերմերի նախացանքային մշակում  $KL$ -ի 0,01%-ոց լուծույթով՝ 24 ժամ տևողությամբ + սննդալուծույթին 0,01%  $KL$ -ի հավելում:

Պարզվել է, որ  $KL$ -ի 0,01%-ոց լուծույթով, 24 ժամ տևողությամբ, սերմերի նախացանքային մշակումը եական ազդեցություն է ունեցել կիտրոնային ռեհանի թերատվության վրա. դեղահումքի չոր քաշը գերազանցել է մյուս տարրերակներին 1,2 և 1,4 անգամ: 2-րդ տարրերակում դիտվել է եթերայուղերի և դարավանյութերի ելի մեծացում 1,6 և 1,3 անգամ, իսկ 3-րդում՝ էստրակտիվ նյութերի և ֆլավոնոիդների 1,3 և 1,2 անգամ, համապատասխանաբար:

Ֆիզիոլոգա-կենսաքիմիական առանձնահատկությունների ուսումնասիրան արդյունքներում պարզվել է, որ կիտրոնային ռեհանի տերևներում ընդհանուր ջոհ. քլորոֆիլի, կարոտինոիդների և C վիտամինի պարունակության վրա աճման խթանիչ ազդեցությունը եական չէ: Սակայն, աճման խթանիչի կիրառումը շուրջ 11-14%-ով իջեցրել է տերևներում օսմոտիկ կապված ջրի պարունակությունը և ջջահյութի օսմոտիկ ճնշումը:

Այսպիսով, կիտրոնային ռեհանի հիդրոպոնիկական մշակույթում, աճման խթանիչ  $KL$  պատրաստուկի կիրառումը նպաստել է ստուգիչ համեմատությամբ հումքի թերատվության բարձրացմանը՝ 1,2-1,4 անգամ և եթերայուղերի, դարավանյութերի, էստրակտիվ նյութերի, ֆլավոնոիդների ելի մեծացմանը՝ 1,2-1,6 անգամ: Դա մեզ հիմք է տալիս առաջարկելու այդ խթանիչի կիրառումը կիտրոնային ռեհանի անհող արտադրությունում:

Mairapetyan S.Kh., Tadevosyan A.H., Alexanyan J.S., Tovmasyan A.H.,  
Stepanyan B.T., Galstyan H.M.

## INFLUENCE OF GROWTH STIMULATOR KL ON THE PRODUCTIVITY OF CITRIC BASIL UNDER OPEN-AIR HYDROPONIC CONDITIONS

### Summary

The results of investigations have shown that the growth stimulator  $KL$  in hydroponics culture of Citric basil promoted the increase of dry medicinal material for 1,2-1,4 times in comparison with the control as well as the output increase of substances (essential oil, tannins, extractive substances and flavonoids) characterizing pharmacocchemical value of raw materials for 1,2-1,6 times. We give a suggestion for using the growth stimulator  $KL$  in the soilless production of Citric basil.

<sup>1</sup>  $KL$ -ի պատրաստուկը սինթեզվել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում՝ ակ. Ա.Ս.Ավետիսյանի ղեկավարությամբ, ով էլ այն սիրով մեզ է տրամադրել՝ փորձարկումների համար: